ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«01» մարտ 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ.Անանյան

ՍՑ-ԳԲԽ-04/17 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.01.2017թ. թիվ 03/73-1/648-17 գրությամբ ներկայացված «Խաչատուրյանի Բիլդիգ Գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 0471575) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի 17.10.2016թ. թիվ ՄՔ/1-311-16 և 10.10.2016թ. թիվ ՄՔ/1-293-16 գրությունների հիման վրա, 21.10.2016թ. թիվ 03/73-1/24125-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Խաչատուրյանի Բիլդիգ Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն 23.09.2016թ. թիվ ՄՔ/1-239-16, 17.10.2016թ. թիվ ՄՔ/1-311-16 և 10.10.2016թ. թիվ ՄՔ/1-293-16 գրություններով ներկայացրել է «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/11» ծածկագրով բանակցային ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) վերաբերող փաստաթղթերը:

Կենտրոնը 30.12.2016թ. թիվ 01/04.1/4831-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 21.10.2016թ. թիվ 03/73-1/24125-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնն արձանագրել է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/11» ծածկագրով բանակցային ընթացակարգի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում առկա չէ:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ղեկավարվելով Կարգի 124-րդ կետով, 20.01.2017թ. թիվ 03/73-3/648-17 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշում

Կենտրոնը 28.10.2016թ. թիվ 01/04.1/3930-16 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին:

Ընկերությունը 18.11.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.08.2016թ. թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ 31.08.2016թ. թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.2 ենթակետի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված որակավորման պահանջների իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում բացակայում են հայտը ներկայացնել տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում համանման պատշաճ ձևով իրականացնելու վերաբերյալ փաստաթղթերը և 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարն 31.08.2016թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը տեղեկացրել է, որ վերջինս 01.09.2016թ. էլեկտրոնային փոստով Պատվիրատուին է ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, որը հավաստվել է տվյալ փաստաթղթերը Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին ուղարկելու վերաբերյալ **khach_bild_group@rambler.ru** էլեկտրոնային հասցեի քաղցածքով:

3. ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն 23.09.2016թ. թիվ ՄՔ/1-239-16, 17.10.2016թ. թիվ ՄՔ/1-311-16 և 10.10.2016թ. թիվ

ՄՔ/1-293-16 գրություններով ներկայացրել է «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/11» ծածկագրով բանակցային ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

4. ՍՑ-ԳԲԽ-04/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 20.01.2017թ. թիվ 03/73-1/648-17 գրությամբ ներկայացված «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից կազմակերպվել է «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/11» ծածկագրով բանակցային ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն:

2. 24.08.2016թ. թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ 31.08.2016թ. թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.2 ենթակետի համաձայն Ընկերության կողմից ներկայացված որակավորման պահանջների իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում բացակայում են հայտը ներկայացնել տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում համանման պատշաճ ձևով իրականացնելու վերաբերյալ փաստաթղթերը և 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարն 31.08.2016թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 02.09.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված

ժամկետում չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

3. Ընկերությունը Կենտրոնին է ներկայացրել Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեից **(khach_bild_group@rambler.ru)** Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին (urbanpiu.gnumner3@gmail.com) ուղարկելու վերաբերյալ համապատասխան էլեկտրոնային քաղցածքները:

4. ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի 17.10.2016թ. թիվ ՄՔ/1-311-16 և 10.10.2016թ. թիվ ՄՔ/1-293-16 գրությունների հիման վրա, 21.10.2016թ. թիվ 03/73-1/24125-16 գրությամբ դիմել է Կենտրոնին՝ խնդրելով ուսումնասիրել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

5. Կենտրոնը 30.12.2016թ. թիվ 01/04.1/4831-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 21.10.2016թ. թիվ 03/73-1/24125-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը հայտնել է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/11» ծածկագրով բանակցային ընթացակարգի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում առկա չէ:

6. Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ղեկավարվելով Կարգի 124-րդ կետով, 20.01.2017թ. թիվ 03/73-1/648-17 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

5. ՍՑ-ԳԲԽ-04/17 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.10.2016թ. թիվ 03/73-1/24125-16 և 20.01.2017թ. թիվ 03/73-3/648-17 գրությունները, ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի 17.10.2016թ. թիվ ՄՔ/1-311-16, 10.10.2016թ. թիվ ՄՔ/1-293-16 և 16.01.2017թ. թիվ ՄՔ/1-10-17 գրությունները և կից փաստաթղթերը, «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 18.11.2016թ. Կենտրոնին ուղղված գրությունը, «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/11» ծածկագրով բանակցային ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության ներկայացրած հայտը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 10.02.2015թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով

ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.08.2016թ. թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ 31.08.2016թ. թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.2 ենթակետի համաձայն Ընկերության կողմից ներկայացված որակավորման պահանջների իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում բացակայում են հայտը ներկայացնել տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում համանման պատշաճ ձևով իրականացնելու վերաբերյալ փաստաթղթերը և 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարն 31.08.2016թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.09.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Միևնույն ժամանակ, Ընկերությունը Կենտրոնին է ներկայացրել Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեից **(khach_bild_group@rambler.ru)** Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին (urbanpiu.gnumner3@gmail.com) ուղարկելու վերաբերյալ համապատասխան էլեկտրոնային քաղվածքները:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/11» ծածկագրով բանակցային ընթացակարգի շրջանակում ստանձնած պարտավորություն չի խախտել, ուստի Կենտրոնը առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 20.01.2017թ. թիվ 03/73-3/648-17 գրությամբ ներկայացված «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 0471575) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ Ռ. Մկրտչյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-04/17 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պարանյան